Ալեքսանդր Ծատուրյան

Հասարակաց մշակին

Թե քո կրծքում բաբախում է
Հոգի անկեղծ, անկաշառ.
Եվ քո սիրտը միշտ ձգտում է
Դեպի բարին ու արդար
Ջո՛ւր է հուսալ, գործի՛չ ազնիվ,
Այս աշխարհից անկեղծ վարձ.
Դու չես գտնիլ հարգանք, պատիվ
Եվ ոչ հանգիստ քո խնդրած:

Թե կոչված ես դու կյանքի մեջ
Մի նոր շավիղ հարթելու
Շավիղ դեպի լույսը անշեջ,
Դեպի արև կենսատու
Դու մի՛ հուսալ, չարքաշ մշա՛կ,
Սուրբ վաստակիդ հատուցում.
Մարդկանց աչքում ծաղր է ծանակ
Ամեն մի վեհ զգացմունք...

Բայց թե քո մեջ չըկա անկեղծ
Սեր դեպի մի վսեմ գործ.
Ավերիչ ես, որպես մի ցեց.
Թունավորող որպես օձ:
Թե պատրաստ ես դու նենգ խոսքով

Պաշտպան կանգնել բրոնության.
Մերձավորիդ փոս փորելով՝
Մատնել նորան դառն անկման…

Հուսա՛, ո՛վ մարդ, և լիահույս
Դու քեզ խնդրիր դափնիներ.
Դարուս ոգին անտարակույս
Կարդարացնե քո հույսեր…
Կը վայելես դու փառք, հռչակ,
Սև գործերիդ դըրվատում.
Եվ իբր հաղթող կը կրես պսակ
Դու այս խարդախ աշխարհում…

1887, 6 օգոստոսի